8 (192). ԿՆԻԿ

Ժամանակին աղքատիմ՝ աղջիկ հարս կը տանին հարուստի տուն։ Յառջի օրվընե՝ նստի կանի, յելնա մտնա՝ տան մեծ ու պըղտըկին կը փնովե, անուն կը դնե, բա՞ն չը հավնի։ Զարեն օր կը կտրի՝ կեսրեր կէրթա աշխար շատ ման էկած ու փորձ մարդու մե մոտ, թե հա՞լ-հեքիաթ՝ մեր վիճակ հմլա-հմլա է, չընք կռնա ճար մը ընի։

Մարդ կըսե.

— Աղքատի աղջիկ հարս օր կէրթա հարուստի տուն ու բան չը հավնի՝ խելքեն կառռ է ու անդեռ։ Ծով հարստութենի մեջ դուդի յըմեն բան մինակ ուրին էդնի, չըմքի ծակ աչք է ու չըտես, ինչ խդեր յառեջ լցիս՝ չը կշտանա։ Ժամանակ մե յետ ճամպնք պապու տուն, թե յուղեց յետ դառնա՝ մանցեր է յառեջվան, չուզեց՝ էլման մանցեր է յառեջվան։

Մեծորեք ըսեր ին. «Կնիկն ծուռ փետ է, չը դզվի», էնի օր ;իմներ ուր աղեկն ու վատ՝ աշխարն յեվելի շեն կէղներ։